ձրագահ և բարեվարք տանն հայոց այսմ աւուր յամսեանն դեկտեմբերի 25. յամի Տեառն փրրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին և կնքեցին և յանձնեցին.
Միքայէլ իշխան . ○
Մանուէլ Գծագիր . ○

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս. Երկրորդ Տանուտէր. ○
Վրթանէս կաղնոյ Երրորդ տանուտէր. ○
Գալստան կաղզվանոյ Չորրորդ տանուտէր։ ○

## ԳԼՈՒԽ ԽԶ.

Պաշտօն իշխանութեան մինչև հարիւրապետութեան բայց 'ի նախարարութեան, 'ի տանէն հայոց կարէ տալ ձեռամբ երիս տանուտէրաւ, հանդերձ միոյ գծագրաւ ըստ սահմանի Օրինաց։

## ԳԼՈՒԽ ԽԷ.

Պաշտօն Նախարարութեան ծայրագոյն դատաւորութեան, տոպետութեան, և սպարապետութեան պարտ է ելանել 'ի տանէն հայոց 'ի բերանէ բոլոր տանուտէրաց ձեռնադրեալ 'ի բոլոր տանուտէրացէ և միոյ գծագրէ և կնքեցեալ կնքաւն տանն Հայոց։